



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 157-Ա
ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ընկերության Վանաձոր քաղաքում հատկացված հաճախականությունը փոխելու վերաբերյալ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի դիմումը և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 01/11.1/6060-2021 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 50-Ա որոշմամբ «ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊ ընկերությանը Վանաձոր քաղաքում հատկացված 104.7 ՄՀց հաճախականությունը փոխարինել 107.7 ՄՀց հաճախականությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ